

“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՒՒ ԳԱՆ” ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՓԵՏՐՈՒՍԱՐ 1. 1877.

ԹԻՒ 2.



միակ արմաւենին անդամ՝ որ նոր կտակարանին մէջ յիշուած էրի. քովին տեղը կը ցուցնէր դեռ քանի մը տարի առաջ:

Շրջակայ երկիրն ընդհանրապէս անբեր և ամայի է, միայն ընդարձակ և լայն դօտի մը կայ, զոր քանի մը առուակներ ուռն գելով պողաբեր կ'ընեն:

ՀՈՎՈՒՆ ԶԻՒՐԸ

Շարունակութեան Աւերաբերէի 1 Բառոյն

Յակօր գլուխը քերելով սկսաւ խորհիլ: Մտածեց թէ տղան գրեթէ մեռնելու վրայ էր, երբ վերջիշուած բոլոր բաներն եղան. բայց մինչդեռ կը խորհէր, զի զին եկեղեցւոյն զանգակայ ձայնը նորէն անոր ականջն հասաւ, և կարծես թէ այն ձայնը հետեւեալ խօսքը կը բերէր Յակօրայ ականջը. «Անոր սիրոյն համար, Անոր սիրոյն համար»: Ուստի Յակօր ուշաբերելով բարձրաձայն ըսաւ. «Այո, պիտի ընեմ»:

«Ի՞նչ պիտի ընես», ըսաւ տղան երկչոտ ձայնով:

«Գեղ իմ տունս պիտի տանիմ», ըսաւ հովիւը:

«Չիս տանելով ի՞նչ պիտի ընես», ըսաւ տղան:

Յակօր, «Մի՛ վախնար, քիչ ատենէն ալ էկ բան մը պիտի լսես», ըսաւ տղուն:

Երբ իրիկուն եղաւ, Յակօր իր ոչխարները ժողովելով փարակը տարաւ: Յետոյ տղուն հետ տուն գնաց: Կինը մենդեան տօնին առթիւ աղէկ կերակուր մը պատրաստած էր: Կրակարանին մէջ աղէկ կրակ մը կը վառէր՝ և սննեակն այնպէս տաք և լուսաւոր էր, որ փո-

ԵՐԻՔՈՎ

Վերի պատկերին մէջ կը տեսնուին քանի մը խարխուլ աւերակներ այն տեղին վրայ, ուր էր երիքով քաղաքը մեր Տէրօջը ժամանակ: Սուրբ Գրոց մէջ յիշուած առաջին երիքովը որուն պարիսպները կործանեցան երբ Յետու և խորայէլի որդիքն անոր բոլորսիքը

պտտեցան, ինչպէս հրամայած էր Աստուած, ոչ այս տեղ այլ անկէ քիչ մը հեռու էր: Հիմա այն քաղաքէն բնաւ նշան մնացած չէ:

Երիքով երբեմն «Քաղաք անուշահոտութեան», երբեմն ալ «Քաղաք արմաւենեաց» կը կոչուէր: Երիքովի շրջակայ երկիրը բարբեր և դեղեցիկ էր: Բայց հիմա անյայտ եղած է այն

ղոցի խեղճ տղան երբէք նմանը տեսած չէր :

Յակոբայ երէց որդին , Օննիկ հարցուց հօրը , “ Ո՛վ է այս տղան : ” Յակոբ պատասխանեց . “ փոխանակ մեծ թագաւորին այս տղան եկաւ մեր տունը մեզի հետ Ծնունդը ընելու : Գնա հանդերձներէդ քանի մը կտոր բեր որ այս խեղճ տղան հագուեցնենք : ”

Օննիկ գնաց իր հանդերձներէն քանի մը կտոր բերաւ , և խեղճ տղան իր հին և թաց լաթերն հանելով տաք և չոր զգեստներ հագաւ , և ամէնքն ՚ի միասին սեղան նստան : Տղան շատ աւնօթի ըլլալով այնպէս ախորժակով կ'ուտէր որ տեսնողը կրնար կարծել թէ խեղճ տղան կենացը մէջ բան կերած չէր :

Կերակուրէն ետքը տղան հարցուց Յակոբայ , “ Ո՛վ է այն թագաւորը որուն կը սպասէիր այս երեկոյ : ”

Յակոբ պատասխանեց . “ Այն մեծ թագաւորն է , որուն ծննդեան տօնն այս օր կը կատարենք : ”

“ Ո՛վ է ան , և ո՛ւր կը բնակի , ” հարցուց նորէն տղան : “ Ան հիմա մեծ թագաւոր է , ” ըսաւ Յակոբ , “ բայց ժամանակաւ քեզի պէս աղքատ էր : Այս թագաւորը Տէր Յիսուս Քրիստոս է , և ես անոր սիրոյն համար զքեզ այսօր հոս բերի : ”

Խեղճ տղան շատ ուրախ եղաւ լսելով այն մեծ թագաւորին վրայով ուրոյ սիրոյն համար դաշտերէն այնպիսի դեղեցիկ տուն մը բերուեցաւ :

Բարեսիրտն Յակոբ զանի իւր տղոցը հետ պահեց , մինչև որ տղան մեծնալով կարող եղաւ աշխատիլ իրեն համար : Այն Ծննդեան իրիկունը հովուին հիւրին համար օրհնութեան օր մը եղաւ :


ՐՈՒՍԻԱՑԻՈՑ ԱԻԱԶԻ ԽԱՂԸ

Կա է և աւագէ չէնք շինելու փափաք ունեցող տղոց համար նշանաւոր տեղ է Րուսիոյ մայրաքաղաքը Փեդրսպուրկ : Յիշեալ քաղքին հասարակաց պարտէզներէն շատերուն մէջ բաց և ընդարձակ տեղեր կան :

Այս բաց տեղերուն իւրաքանչիւրին մէջ երկու կանգուն բարձրութեամբ աւազի կոնաձև կոյտեր կը տեսնուին :

Այն կողմերու տղայք առաւօտեան ճաշէն ետքը փոքրիկ բահերով , տապարներով և սայլերով աւազի կոյտերուն քով կու գան , այն կոյտերը կը փորեն , և աւազը չորս կողմ կը տարածեն չէտեկեալ առաւօտ երբ տղայք պար-

տէզները կու գան , կը տեսնեն որ աւագները դարձեալ կոնաձև դիզուած են . փեղրսպուրկի թարապետութիւնն այն աւագները դիզել տուած է տղայոց գրօսանաց համար , և ամէն առաւօտ դիզել կու տայ : Այս գրօսանքն օգտակար է , վասնզի քաղքին տղայք այն բաց տեղերուն մէջ մարմնամարզութիւն ընելով առողջարար օդ կը ծծեն և առողջ կ'ըլլան :



ԿՈՒԱՆՈՑ

Վերի պատկերին մէջ կը տեսնուի կղզի մը որ շուրէն վեր է և թռչուններով ծածկուած կ'երեւի : Այս կղզին Հարաւային մերիկայի մէջ Բերուի ծովեզերքին մօտ կուանոյ կուտած կղզիներէն է : Կղզիները ծածկուած են չոր և ճերմակ նիւթով մը որ դիւրութեամբ փոշի կը դառնայ : Այս նիւթն ալ կուանոյ կը կոչուի , և կազմուած է միլիոնաւոր ծովային թռչնոց աղբէն , որ դարերէ իվեր հոն դիզուած է : Փորձով գտնուած է որ այս նիւթն օգտակար է արտերը պարարելու և զորացնելու , ուստի և շատ մարդիկ ամէն տարի նաւերով այն կղզիներն երթալով այս նիւթէն կ'առնեն , և տանելով կը ծախեն Ամերիկայի և Եւրոպայի երկրագործներուն : Վերի պատկերին մէջ տեսնուած նաւն կուանոյ տանող նաւ է :

Տղայոց Աւազի կոյտերի համար

ՄԱՐԻՅԱ ՏԻԿՆՈՋ ՍԵՒ ՀԱՒԸ

Մեր գրացի Աննիկ տիկինը երեք զաւակ ունէր որ բաւական շատակեր էին , մանաւանդ կրտսերը : Թերեւս պիտի ըսէք թէ շատակերութիւնը մեծ մոլութիւն մը չէ . տղայք առողջ կազ-

մութիւն և զօրաւոր ստամուքս ունենալով շատ կ'ուտեն : Արդարև շատակերութիւնը մեծ մոլութիւն մը չէ , բայց մեծ մոլութիւններու ճամբայ կը բանայ , ինչպէս պիտի տեսնուի հետեւեալ պատմութենէն :

Աննիկ տիկինն իր գզրոցին մէջ խոչոր տանձեր պահած էր Ծննդեան տօնին համար , բայց օր մը գզրոցը բռնալով տեսաւ որ տանձերէն երկուքը պակասած էին :

Աննիկ տիկինը հարցուց իր տղոցը թէ այն տանձերն առի՞ն . բայց տղայք միաբերան ուրացան , և անոնցմէ մին հօղագործին տղէն կը կասկածէր իբր թէ ան էր գողը : Աննիկ տիկինը կը ցաւէր ոչ թէ տանձերուն կորստեանը , այլ գողութեան չար գործին համար , և սկըսաւ ինքնին խորհիլ :

Մինչդեռ նա առանձին կը խորհէր այս բանին վրայ , անոր քով եկաւ Մարիցա տիկինը որ հնարաղիտութեան մասին մեծ համբաւ ստացած էր : Աննիկ տիկինը Մարիցա տիկնոջ պատուեց գործը , և անոր խորհուրդ հարցուց թէ ինչպէս կրնար գտնել տանձերուն գողը :

Մարիցա տիկինն ըսաւ . “ Գողը գտնել դիւրին է : Դուն հիմա տղաքդ և տանը մէջ գտնուողներուն ամէնքը հոս ժողվէ : ” Երբ ամէնքը ժողվեցան , Մարիցա տիկինը սկսաւ այսպէս խօսիլ .

“ Զեր մէջ գող մը և ստախօս մը կայ , որ գտնուելու և պատժուելու է : Ես հոս հաւ մը ունիմ որ դողեր գտնելու մէջ շատ վարպետ է : Պէտք է որ ամէնքդ անոր առջեւէն անցնիք , և անոր կոնակը շփէք : Երբ գողին ձեռքը հաւուն կոնակին կը դպչի , հաւը թեւերն ու ոտքերն իրարու զարնելով յանկարծ ձայն կը հանէ : ”

Այս ըսելէն ետքը Մարիցա տիկինը կողով մը բացաւ , որուն մէջ էր հաւը : Փոքր գողին սիրտը դող ելաւ այս բանին վրայ :

Ամէնքը կարգաւ եկան և հաւուն կոնակը շփելով անցան , բայց հաւը ձայն չհանեց և գողը չյայտնուեցաւ : Մարիցա տիկինը տղայոց ուղղելով

Մարիցա տիկինը տղայոց ուղղելով

Մարիցա տիկինը տղայոց ուղղելով

իր խօսքն ըսաւ . «Կ'երևի թէ հաւս իր բնաւորութիւնը փոխած է : Թերևս գողին ձեռքերուն մէջ գրեց . երկրն ցուցէք ձեր ձեռքերը որ տեսնեմ :» Առաջինը երկնցուց ձեռուները և տեսնուեցաւ որ անոր ձեռքը սև ներկուած էր : Տղան «Ես բան չգողցայ» ըսաւ . «ստախօս է այս հաւր» :

Մարիցա տիկինն իր քննութիւնը շարունակելով հասաւ կրտսերին, և տեսաւ որ անոր ձեռքը ձերմակ մնացած էր . և ըսաւ անոր . «Անիրաւ գող, ինչո՞ւ տանձերը գողցար և սուտ խօսեցար, դու ես գողը, խոստովանէ :» Ամէնքը սկսան խորհիլ այս բանին վրայ, և չէին կրնար հասկնալ թէ ի՞նչ էր անոր գաղտնիքը : Մարիցա տիկինը հառու գաղտնիքը չյայտնելու համար անոնց բան մը չըսաւ :

Փոքրիկ բարեկամներս, կը հարցնեմ ձեզի, Հասկցա՞ք ինչ էր հաւուսն հնարագիտութիւնը : Մարիցա տիկինն արդարև հնարագէտ էր . առաջուց մուր քսած էր իր հաւուսն կռնակը գողը գտնելու համար : Անոնք որ անպարտ էին, հանգարտ խղճիւ հաւուսն կռնակը չփելով անցան, և այս պէս անոնց ձեռքերը սևցան . իսկ բուն գողը վախնալով թէ հաւը ձայն պիտի հանէր երբ անոր կռնակը չփէր, ձեռքը չզպցուց անոր կռնակին, ուստի և ձեռքը չսևցաւ, և այսպէս անոր յանցաւորութիւնը յայտնուեցաւ, և ինք խայտառակ եղաւ :

ՍԵՒ ՍԱԹ

Մեր կատուն այնպէս սեւ է, որ անոր սեւ սաթ անունը տուած ենք : Ամէնքս ալ ջանացած ենք կրթել այս կատուն և անոր քանի մը բան սորվեցնել, բայց կատուն դեռ երկու մեծ թերութիւններ ունի : Անոր թերութիւններէն մին է ծուլութիւնը, և միւսը՝ ամէն բան լսելու և իմանալու հետաքրքրութիւնը : Մինչ մեծ և փոքր մկունք համարձակ կը պտտին սենեկին մէջ, մեր կատուն կը սիրէ վառարանին քով նստել և մրափել : Մինչ օր մը մեր խոհակերը սեղանը համեղ կերակուր կը դնէր, Սև սաթն անոնց հոտն առնելով սկսաւ խոհակերին ետևէն երթալ, որպէս թէ կը խրճդէր որ այն կերակուրներէն անոր ալ տրուէր : Բայց խոհակերը սաստելով ըսաւ անոր . «Կորուսէ, ծոյլ . արժանի չես կերակուր ուտելու» :

Կատուն ետ քաշուելով, երբ դուռը բացուեցաւ դուրս ելաւ : Քիչ

մը ետքը երբ դուռը նորէն բացուեցաւ, կատուն նորէն ներս մտաւ, և բերանը մեծ մուկ մը ունէր : Կատուն, իր որսը բերանը, խոհակերին ետևէն կ'երթար, և իբր թէ ըսել կ'ուզէր . «Պարոն խոհակեր, դուն քիչ մը առաջ զիս ծոյլ կոչեցիր, բայց ահա կը ցուցնեմ որ ծոյլ չեմ, ուրեմն ինձի կերակուր տալու ես» :

Կատուն աղէկ կերակուր մը տրուեցաւ, և կարծեմ թէ այն օրէն ի վեր անոր ծուլութիւնը սկսաւ երթալ անկէ, վասնզի կերակուր ուտելէն ետքը վառարանին քովը նստելով փոխանակ մրափելու, աչքերը անկելով մտածել կը դիտէր, այնպէս որ քիչ օր ետքը մուկերն անհետ եղան անկէ : Հասկցան թէ իրենց համար վտանգաւոր էր այնուհետև տանը մէջ համարձակ պտտել, մինչ արթուն և և աշխուրջ կատու մը պատրաստ էր զանոնք իրեն որս ընելու :

Ուրիշ անգամ պիտի խօսիմ Սեւ սաթին միւս թերութեան վրայ, և պիտի պատմեմ թէ ինչպէս ուղղեց նաև այն թերութիւնը :



ԳՊՐՈՑ ԳԱՅՈՂ ՏՂԱՅԻ

Վերը պատկեր մը կայ փոքր տղոց համար : Գերմանացի երկու տղայք, Հանս և Կրէչէն, դպրոց կերթան և Ֆրից դահկով կը տանի զանոնք :

Գետինը ձիւնով ծածկուած է, վասնզի ձմեռ է : Օղը շատ ցուրտ է, բայց այն փոքր տղայք տաքուկ հանդերձներ հագած ըլլալով ցուրտէն չեն վախնար :

Ֆրից բաւական դժուարութեամբ կը քաշէ դահուկը որուն վրայ նստած են Հանս և Կրէչէն : Քիչ մը ետքը Հանս դահուկէն պիտի ելլէ, և անոր տեղ Ֆրից պիտի նստի : Կ'ուզէ՞ք գիտնալ թէ այս տղայք դահուկն ինչ կ'ընեն դըպ-

րոցի ատեն : Դպրոցին դրան վրայ դաւն մը կը կախեն զայն, և երբ խաղալու ատենը կուգայ, իրենց դահուկը գաւնէն վար կ'առնեն, և բլուրն ի վար կը սահին անով :

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ ՈՒ ԱՆՈՐ ԳՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Դպրոցի մը մէջ փոքրիկ աղջիկ մը գրի օրինակն առջին առած, և աչքերն անոր տնկած ուշադրութեամբ կը դիտէր թէ տողերն ինչպէս շիտակ, և գիրերն ինչպէս գեղեցիկ և վայելուչ կերպով գրուած էին : Աղջիկն այսպէս գրի օրինակին նայելով, մտքէն ըսաւ . «Ես երբէք պիտի չկրնամ այսպէս գեղեցիկ գրել» : Յետոյ գրիչը ձեռքն առաւ և անոր ծայրը թղթին վրայ դրաւ : Խեղճ աղջկան ձեռքը կը դողար, ուստի կամաց մը ձեռքը ետ քաշեց, և դարձեալ ուշադրութեամբ օրինակին նայելով ըսաւ . «Որչափ հնար է աղէկ գրելու պիտի ջանամ» : Այսպէս ըսելով թուղթին կէսը լեցուց բայց գիրերը և տողերը ծուռ ու մուռ էին : Գիր գրել նոր սկսող փոքրիկ տղէ մը ասկէ աւելի բան կը յուսացուի :


Աղջկան ընկերներէն մին անոր գրին նայելով, «Գիրդ շատ գէշ է» ըսաւ : Խեղճ աղջկան աչքերն արտասուօք լեցուեցան, երբ այսխօսքը լսեց, և մտքէն կ'ըսէր . «Վարժուհիս պիտի բարկանայ երբ գիրս տեսնէ» :

Բայց երբ վարժուհին եկաւ և փոքրիկ աղջկան գիրը տեսաւ, զուարթ դէմքով ըսաւ անոր . «Աղջիկս, կը տեսնեմ որ կը ջանաս աղէկ գրել սորվիլ : Այս ջանքդ աղէկ է» : Աղջիկը քաջալերուեցաւ վարժուհու խօսքերէն և գրիչը ձեռք առնելով սկսաւ դարձեալ գրել : Ուշադրութեամբ կը նայէր օրինակին, և կը գրէր : Բայց աղջկ գիր գրել սորվիլ շատ դժուարին է : Գրերէն ոմանք այս դին, ոմանք այն դին ծուռած էին, ոմանք ալ ամէն կողմ կը նայէին : Երբ վարժուհին մտտեցաւ, աղջիկը դողալով ըսաւ . «Կը վախնամ որ շատ գէշ պիտի գրանես դիրս և պիտի չհաւնիս, վասնզի

օրինակիս ամենևին նմանութիւն չու-
նի:” Բայց վարժուհին անոր, «Աղջիկս,
գիրք գէշ չեմ գտներ, վասնզի ոչ թէ
գրուած իդ, այլ նպատակիդ և փափա-
քիդ կը նայեմ:” Ըսաւ: «Փութով և սըր-
տանց աշխատելով օրէ օր յառաջ կ’եր-
թաս, և վեջապէս կը յաջողիս աղէկ
գրելու:”

Աղջիկը շնորհակալ եղաւ վարժուհ-
ւոյն, և անոր խօսքերէն քաջալեր-
ուելով գրիչը ձեռքն առաւ և աւե-
լի փափաքով և ջանքով սկսաւ գրել:

ԿԻՆԱՄՈՆԻ ԾԱՌԸ



Կինամոնը
դարձեալ կեղևն
ծառին կեղևն
է: Այս ծառը
Հնդկաստանի
մէջ, մանա-
ւանդ Սէյլան
կղզին կը բուս-
նի: Ճամբորդ
մը այսպէս կը

գրէ կինամոնի ծառին վրայ,
«Կէս օրէն ետքդ այնքը դէպ ի կի-
նամոնի պարտէզները որ նշանաւոր են:
Այս պարտէզներն այն երկրին մէջ
աւելի քան տասն և եօթն հազար
արտափար տեղ կը բռնեն, և ամենէն
ընդարձակ պարտէզները Գոլոմպոյի
մօտերն են: Կինամոնի ծառն անբեր և
աւազուտ գետնի և խոնաւ օդի մէջ
շատ աղէկ կը բուսնի: Անտառաց մէջ
վայրի կինամոնի ծառերը մեծ խըն-
ձորենույ մը չափ կը մեծնան, բայց
պարտէզներու մէջ երեք կամ չորս
կանգուն մեծ կ’ըլլան, վասնզի պար-
տիզպանք անոնց շատ բարձր ճիւղերը
կը կտրեն: Կինամոնի ծառին տերեւը
դափնուոյ տերեւին կը նմանի, և գոյնը
քիչ մը աւելի բաց է: Տերեւները երբ
նոր կը բացուին կարմրագոյն են և եր-
թալով կը դեղնան: Եղիկը սպիտակ
է և երբ ամբողջ կը բացուի, պար-
տէզը կը ծածկէ:

Շատ բան լսած էի այն կղզիէն վը-
չող անուշ հովերուն վրայ, բայց շատ
զարմացայ և ցաւեցայ երբ պարտէզ-
ներուն մէջէն անցնելով անուշ հոտ
չառի: Ետեւորուն բոլորտիքն անու-
շահոտ տունկ մը կայ. մենք նախ այն
տունկին հոտն առնելով կարծեցինք
թէ կինամոնի հոտ է, բայց քիչ մը
ետքը տեսանք որ սխալած էինք:

Կինամոնի ծառին տերեւը երբ նոր
կը փրցուի, հոտ ունի, բայց ծաղիկը

շատ քիչ հոտ ունի և կամ բնաւ հոտ
չունի:

Կինամոնի պարտէզներուն տէրը կի-
նամոնի ծառին կեղևները հանողնե-
րէն քանի մը հոգի զրկեց մեզի: Ասոնք
իրենց հետ իբր մէկ կանգուն երկայն
ոտեր բերելով դանակներով, կը հա-
նէին անոնց կեղևները, և ապա գոր-
ծիքով մը կեղևներն երկայն շերտեր
ընելով խուրձ կը կապէին, Այսպէս կը
հանուի և արևին մէջ կը չորցուի,
փայտն ալ վառելու համար կը ծախ-
ուի:”

«ՔԱՇԷ, ԱԴԱՄ, ՔԱՇԷ»

Իրանտայի մէջ Ադամ անուն տղայ
մը կտաւի գործարան մը գրուեցաւ:
Անգամ մը մարդ մը պրակ (թօփ) մը
կտաւ շինել ապսպրեց գործարանին
աիրոջը: Պրակը գործուեցաւ, բայց
չափը պակաս էր: Գործարանին տէրը
խորհեցաւ կտաւը քաշելով պահան-
ջուած չափին մօտեցնել, ուստի կտա-
ւին մէկ ծայրէն ինք բռնեց, միւս ծայ-
րըն ալ վերոյիջեալ տղան տալով կ’ը-
սէր. «Քաշէ, Ադամ, քաշէ:

Տղան յանձն չառաւ այնպէս ընել,
երբ գործարանին տէրը պատճառն
հարցուց անոր, «Վասն զի անիրաւու-
թիւնն է” ըսաւ տղան:

Գործարանին տէրն ըսելով թէ,
«Դուն այսպիսի արուեստի մը յարմար
չեմ:” հանեց տղան գործարանէն:
Այս տղան յետոյ նշանաւոր քարոզիչ
մը եղաւ:

ՍՈՒՐԲ ԳԻՐԲ ԿԱՐԳԱՅՈՂ ՓՈՔՐԻՆ ՏՂԱՅՈՅ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Քաղաքէ մը բազմութիւն մը ելե-
լով առուի մը մէջէն դէպ ի բլուր մը
կը քալէ: Արք և կանայք և տղայք
խառնի խուռն, շատ խուռ և գլուխ
ի վայր խոնարհած կ’երթան: Շատերուն
աչուրներէն ջերմ արտասուաց կաթիլ-
ներ կը հոսեն, և շատ սրտերէ հառա-
չանաց ձայներ կը բարձրանան դէպ եր-
կինք: Բայց անոնց հետ թագաւոր մը
կայ որ իր փառաւոր հանդերձները
հանած է, և բոկոտն կ’երթայ առջևէն,
Բազմութիւնը տեղ մը հասնելով կը կե-
նայ և կը թուի թէ անոնց մէջէն ունաք
ետ կը դառնան: Ասոնք քահանայք են
զորս թագաւորն Աստուծոյ տապանա-
կին հետ նորէն կը զրկէ քաղաքը ուս-
տի բոլոր այն բազմութիւնը կը փախչէր:
Երբ թագաւորը և մնացեալ բազմու-


թիւնը բլրոյն գագաթը հասնելով անկէ
յառաջ կը քայեն, ուրիշ մարդիկ էջերով
և պաշարներով կը դիմաւորեն զանոնք,
և քանի մը վայրկեան թագաւորին հետ
խօսելէ ետք կը միանան բազմութեան
հետ և մէկ տեղ կ’երթան: Քիչ մ’ալ
յառաջ երթալէն ետք կատաղի մարդ
մը վազելով կու գայ բազմութեան մօտ,
և ճամբէն քարեր ժողվելով կը նետէ
բազմութեան և թագաւորին ետևէն,
բայց անոր այն թշնամանայը կարևո-
րութիւն չի տրուիր: Վերջապէս բազ-
մութիւնը յարմար տեղ մը հասնելով
կը հանգչի:

Ո՛վ էր այն թագաւորը և ի՞նչ վը-
տանգէ կը փախչէր: Ո՛վ բերաւ էջե-
րը և պաշարները: Ո՛վ էր որ քարնե-
տելով կ’երթար բազմութեան ետևէն:
Այս պատմութիւնը ո՞ր կը գտնուի:

ԱՆՏԵԱԼ ԱՄՍՈՅ ՀԱՐՅՄԱՆՅ ՊԱՏԱՍԻԱՆ

Մոյեմի, Հռութ և Որփա էին այն
երեք կանայք: Հռութ Դաւթի հա-
նին էր: Հռութն Ա—Դ:

ՍՈՒՆ ԽՕՍԻԼ



տախօսն ի՞նչ կը շահի
սուտ խօսելով” հար-
ցուեցաւ ժամանակաւի-
մաստուն մարդու մը:
Իմաստունն այն հարցման
այսպէս պատասխանեց.
«Ստախօս մարդուն
շահն այս է որ, եթէ ու-
ղիւ ալ խօսի, ոչ ոք կը
հաւատայ անոր խօս-
քին:”

Տղայք, միշտ յիշեցէք իմաստուն
մարդուն այս խօսքը, և մի մտնաք
նաև թէ աշխարհիս ամէնէն մեծ ի-
մաստուններէն աւելի մեծ իմաստուն
մը ըսած է. «Բոլոր ստախօսներուն
բաժինը կրակով ու ծծումբով վառած
լիճին մէջը պիտի ըլլայ:”

Ա.Ի.ԵՏԱՐԵՐԵԹՈՒՆ ԳԻՆԵՐԸ

Ամաական Աւետարեթին գինն է փոս-
թայի ծախքով տարին 1/4 արծաթ մէ-
ճիտիյէ կանխիկ, և մէկ թերթը 30 փա-
րա է:

Շաբաթական Աւետարեթին գինն է
փոսթայի ծախքով տարին 1 1/2 արծաթ
մէճիտիյէ կանխիկ:

Ամերիկայի միսիսոսրաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ճ. Ք. ԿԻՐԵՆ
Ֆիլաճանքաւ եօզուլու, Ամերիկան Իսան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՒ ՊՅՈՑՅԵԱՆ